

Արի եւ քաջ վարժապետի,
 Խարազնազգեաց ճգնաւորի,
 Ատուածաբան Վարդապետի,
 Որ ի հովտէս յայս տրտմալի,
 Եւ առ Փրկիչն, ի յոյսն բարի.
 Ի ԻԳ յոբելէնի,
 Երբեակ թուոյս յաւելադրի՝.
 Որ հանդիպիք տուք զողորմի՝:

Էջ 59—61, Ծանօթ. 1: — Ծայլն բառը անգամ մըն ալ խոսորով Անձեւացին կը գործածէ արտայայտիչ կերպով մը.

— «Յորժամ վիճաբանելով մարտնչին ընդ այլ ազգ քրիստոնեայս, զանձինս արդարացուցանեն տգիտաբար՝ իբր թէ միայն Հայք են ի ճշմարտութեան եւ որպէս տեսանեմք՝ քան զամենեսեսան մերս է ջրեալ կարգաւորութիւն. եւ որ ոչ այլոց ազգաց իրաւունս որոցէ յէրս ինչ ժամ ճշմարտութեան՝ ծայր կարգան եւ ինքի ի հասարակ ծանակ առնեն եւ հալածեն եւ ի մահ սպառնան, մինչ գրեթէ մազապուրծ լիցի» (Մէլն. Ժ. Գրգ. տպ. Օրթազիւղ (Կ. Պոլիս), 1840, էջ 199):

Իսկ իմ Բանասէր Վարդապետը, Գուրեան Սրբազան, Ծայրի ծագման նկատմամբ սա՛ մեկնութիւնը կու տայ՝ իր մէկ նամակին մէջ.

— «Ծայր բառին համար ինծի շատ հաւանական կ'երեւի Ուխտանէսի կարծիքը. Ծաւղէից աշխարհին քրիստոնեայ բնակիչներն են ատոնք, որոնց գուցէ այլանդակ սովորութիւնները պատճառ տուած բլլան ուղղափառութենէ խոտորող հասարակութեան առ մեզ»:

Էջ 71: — Սարգիս Վրդ. Սառաֆեանի ընդարձակ կենսագրութիւնը գրած է տաղաշափօրէն՝ Յովհաննէս Վրդ. Նուրտինեան: Սառաֆեան կը ծնի Էտիրնէի մէջ 1699 Փետր. կ'աշակերտի Կո-

¹ (23 × 50 = 1150) + (3 = 1153) + (552) = 1705: